ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք,
ՀՀ Վայոց ձորի մարզ, գ. Արենի 15 փ., շ. 3, Հեռ. 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

N 1948
26 սեպտեմբեր 2024թ.

«ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
Ա. ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

2022թ. հունիսի 06-ին Արենի համայնքապետարանի՝ ի դեմս համայնքի ղեկավար Հուսիկ Սահակյանի և Ձեր միջև կնքվել է թիվ «ԱՐԵՆԻՀ-ԳՀԱՇՁԲ-07/22/3» Արենի համայնքի Ելփին բնակավայրի «Դադիվան» Ջրաղբյուրի 4 կապտաժների կառուցման և ջրագծի արտաքին ցանցի մասնակի նորոգման աշխատանքների պայմանագիր:

Ձեր կողմից աշխատանքները կատարվել են մասնակի՝ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 8-ը /հիմք՝ 08.12.2022թ. ներկայացված կատարողական ակտ/, իսկ այդ ընթացքում համայնքի կողմից փոխանցվել է պայմանագրով սահմանված իր պարտավորությունների 6 800 000 (վեց միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, իսկ մնացորդ ամբողջ գումարը պետք է փոխանցվեր կատարված աշխատանքները ընդունելուց հետո՝ պայմանագրով սահմանված ժամկետում: Այս պահին աշխատանքները չեն հասցվել իրենց ավարտին, ինչը վնաս է պատճառում համայնքապետարանի և բնակիչների շահերին:

Ձեր կողմից խախտվել են պայմանագրի 1.3 կետը, որի հիմքով նույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված են տույժեր:

Վերոնշյալ հանգամանքները ի հայտ են բերել պայմանագրի 3.1.4 կետի հիման վրա պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքեր: Պայմանագիրը միակողմանի լուծելու կարգը նշված է պայմանագրի 8.11 կետում (սույն գրությունը հրապարակվելու է նաև WWW.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի <<Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ>> բաժնում) :

Հետևաբար՝ առաջարկում եմ սույն գրությունը ստանալուն պես հայտնել Ձեր դիրքորոշումը վերոնշյալի մասով, ինչպես նաև վերոնշյալ հիմքով համարել թիվ «ԱՐԵՆԻՀ-ԳՀԱՇՁԲ-07/22/3» պայմանագիրը լուծված:

Կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվարկները և վճարումների հետ կապված հարցերը կարող են քննարկվել բանակցությունների միջոցով կամ դատական կարգով:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

Կատ. Աշխատակազմի քարտուղար Գ. Սիմոնյան
Հեռ. (093) 752480